«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ և ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առարկան՝ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հետազոտող ուսուցիչ՝ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

Ուսումնական հաստատություն՝ Ն.ԲԱՁՄԱԲԵՐԴԻ Ե.ԱՍԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

2022

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը պատմության դասավանդման ընթացքում ---------- 4

Եզրակացություն---------- 14

Օգտագործված գրականության ցանկ---------- 15

Ներածություն

<u>Թեմայի կարևորությունը</u>: Սովորողը պարտավոր է հարգել և պաշտպանել կրթահամալիրի ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների իրավունքները, կատարել ուսումնական պլանը, հարգել ուսումնական պարապմունքների հաստատված ժամատախտակը, դասացուցակը, ուսումնական պլանով որոշված կարգերը, ուսումնական պարապմունքի գնալիս ժամացույց ունենալ:

Սովորողը պարտավոր է բարեխիղճ օգտվել կրթահամալիրի գույքից և ուսուցման միջոցներից, սահմանած կարգով վերականգնել կրթահամալիրին հասցված նյութական վնասը:

Սովորողը պարտավոր է առանց ուշացման հաճախել ուսումնական պլանով որոշված պարապմունքներին, դասընթացների ծրագրերով որոշված ուսումնական ճամփորդություններին, զբաղվել ուսումնական-հայրենագիտական գործունեությամբ, մասնակցել ուսումնական պլանով որոշված ուսումնա-հետազոտական ճամբարին, նախասիրությունների զարգացման ստուգատեսներին, հրապարակել իր ստեղծագործական-հետազոտական աշխատանքի արդյունքները:

Սովորողը պարտավոր է իր բացակայության, ուշացման մասին նախօրոք տեղյակ պահել մասնաճյուղի գրասենյակի ղեկավարին, իսկ չտեղեկացնելու դեպքում ներկայացնել գրավոր բացատրագիր:

Սովորողը պարտավոր է մաքուր պահել ուսումնական աշխատավայրը, մասնակցել ինքնասպասարկման և հանրօգուտ աշխատանքներին:

Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

<u>Թեմայի նպատակը</u>: Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը կարգապահական նոր խախտում թույլ չի տվել և դրսևորել է իրեն որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ սովորող: Անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

Սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը պատմության դասավանդման ընթացքում

ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ.

- Անվճար ստանալու տարրական, հիմնական և միջնակարգ կրթություն,
- Անվճար օգտվելու դպրոցի գրադարանից /բացառությամբ վարձավճարով տրվող դասագրքերից/, պետության կողմից ֆինանսավորվող կաբինետ-լաբորատորիաներից, բուժ. կետից և մյուս ծառայություններից.
- Դպրոցում յուրացնելու վճարովի նախասիրական կրթական ծրագրեր.
- Օգտվելու դպրոցում գործող մյուս վճարովի ծառայություններից.
- Ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները՝ ինչպես բանավոր, գրավոր խոսքի, այնպես ել արվեստի ստեղծագործությունների միջոցով.
- Մասնակցելու հաստատության ներքին կյանքին, ընտրվելու աշակերտական կազմակեռպության մարմիններում.
- Հրաժարվելու այնպիսի աշխատանքներ կատարելուց, որոնք նախատեսված չեն դպրոցի կանոնադրությամբ և վտանգավոր են կյանքի համար.
- Խրախուսվել օրինակելի վարքի, բարձր առաջադիմության համար, համապատասխան արդյունքներով պարգևատրել գովասանագրով, ոսկե կամ արծաթե մեդալով.
- Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

Դպրոցի սովորողը պարտավոր է.

1. Կանոնավոր հաճախել ուսումնական պարապմունքներին, անհարգելի պատճառով չուշանալ, չբացակայել դասերից.
2. Սովորել բարեխղճորեն, պահպանել մայրենի լեզվի մաքրությունն ու անաղարտությունը.
3. Խնամքով վերաբերվել դպրոցի շենքին, գույքին և ունեցվածքին, ծառերին ու թփերին.
4. Հարգել դպրոցի սովորողների և աշակերտների իրավունքներն ու արժանապատվությունը.
5. Օգնել փոքրերին, հոգատար լինել նրանց նկատմամբ, հարգալից լինել ծնողների, մեծերի, կանանց և աղջիկների նկատմամբ.
6. Խնամքով վերաբերվել շրջակա միջավայրին, բնությանը, մասնակցել բնության պահպանման աշխատանքներին, շաբաթօրյակներին.
7. Իմանալ և պահպանել անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային, ճանապարհային երթևեկության կանոնները, կարողանալ պաշտպանվել տարերային աղետից.
8. Ամենուր պահպանել մաքրություն, անձնական հիգենայի կանոններ, չծխել, չօգտագործել ոգելից խմիչքներ և թմրանյութեր:

Սովորաբար երեխաները, լուծելով մեծ քանակությամբ կոնկրետ առաջադրանքներ, իրենք են տարերայնորեն բացահայտում նրանց լուծման ընդհանուր միջոցը, ընդ որում այն միջոցը տարբեր աշակերտների կողմից գիտակցվում է տարբեր չափով: Զարգացնող ուսուցումը ենթադրում է երեխաների և ուսուցչի կողմից խնդիրների մի մեծ խմբի լուծման միջոցի համատեղ բացահայտում և ձևակերպում: Այս դեպքում ընդհանուր միջոցը դառնում է օրինակ և հեշտ տարածվում է այդ դասի այլ առաջադրանքների վրա, ուսումնական գործունեությունը դառնում է առավել արդյունավետ, իսկ սխալներն աստիճանաբար վերանում են:

Որպես օրինակ՝ կարող է ծառայել լեզվի դասերի ժամանակի կառուցվածքաիմաստային վերլությունը: [1]

Երեխաները պետք է յուրացնեն բառի նշանակության և ձևի միջև կապը: Դրա համար էլ նա յուրացնում է բառի հետ գործողության հիմնական միջոցները. պետք է փոխել բառը, համեմատել այն նոր ձևավորվածի հետ և իմաստային և ձևի առումներով, դուրս բերե; կապ ձևի և նշանակության փոփոխությունների միջև:

Ուսումնական օպերացիաները երրորդ բաղադրիչն են և մտնում են գործողությունների միջոցի մեջ: Օպերացիան և ուսումնական խնդիրը ուսումնական գործունեության կառուցվածքի հիմնական օղակն են:

Յուրաքանչյուր ուսումնական օպերացիա պետք է մշակված լինի: Աշակերտը, կողմնորոշվելով օպրեացիաների կազմում, կատարում է դրանք նյութականացված՝ ուսուցչի վերահսկողության տակ: Սովորելով դա անել գրեթե անսխալ՝ նա անցում է կատարում արտասանմանը, և վերջապես, օպերացիաների կազմի կրճատման փուլում նա արագ լուծում է խնդիրը մտքում՝ հաղորդելով ուսուցչին պատրաստի պատասխանը:

Չորրորդ բաղադրիչը հսկողությունն է: Սկզբնապես աշակերտների ուսումնական գործունեությունը հսկում է ուսուցիչը: Բայց աստիճանաբար նրանք սկսում են իրենք հսկել իրենց: Առանց ինքնավերահսկողության հնարավոր չէ ուսումնական գործունեության լիրաժեք զարգացումը, դրա համար էլ հսկողության ուսուցանումը կարևորագույն և բարդ մանկավարժական խնդիր է: Բավարար չէ աշխատանքը հսկել միայն վերջնական արդյունքի հիման վրա, երեխայի համար կարևոր է ուսումնական գործունեության ամբողջ ընթացքի հսկողությունը: Աշակերտին սովորեցնելը՝ վերահսկելու իր ուսումնական գործունեության ընթացքը, նշանակում է նպաստել այնպիսի հոգեկան ֆունկցիայի ձևավորմանը, ինչպիսին ուշադրությունն է:

Հսկողության վերջին փուլը գնահատկանն է: Այն կարելի է համարել ուսումնական գործունեության հինգերորդ բաղադրիչ: Երեխան, հսկելով իր գործունեությունը, պետք է կարողանա և ադեկվատորեն գնահատել այն:

---

[1] 1.Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ»
2.Բաբանսկի հատոր առաջին
3.Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ, «Համագործակցային ուսուցում ձեռնարկ», 2006թ

Մյուս կողմից, ուսուցիչը, գնահատելով աշակերտների աշխատանքը, չի բավարարվում միայն միավորներ դնելով: Երեխաների ինքնազարգացման համար կարևոր է ոչ այնքան միավորը որպես այդպիսին, այլ բովանդակային գնահատականը, այսինքն՝ բացատրությունը՝ ինչու է դրվել այս կամ այն գնահատական-միավորը, ինչ դրական և բացասական կողմեր ունի պատասխանը: Բովանդակայնորեն գնահատելով ուսումնական գործունեությունը, նրա արդյունքները, գործընթացը ուսուցիչն առաջադրում է որոշակի կողմնորոշիչներ՝ գնահատման չափանիշներ, որոնք պետք է յուրացվեն երեխաների կողմից:

Կրտսեր դպրոցականները բարձր են գնահատում իրենց աշխատանքը, եթե նրա վրա նրանք ծախսել են շատ ժամանակ, ջանքեր՝ անկախ այն բանից, թե ինչ են ստացել արդյունքնում: Ուրիշ երեխաների աշխատանքին նրանք առավել քննադատաբար են մոտենում, քան իրենց սեփականին: Այս կերպ երեխային սովորեցնում են գնահատել ոչ միայն իրենց աշխատանքը, այլև համադասարանցիների աշխատանքը՝ բոլորի համար ընդհանուր կարոններով: Հաճախ օգտագործվում են այնպիսի հնարներ, ինչպիսիք են օրինակ՝ պատասխանների կոլեկտիվ քննարկումը: Այս հնարները դրական էֆեկտ են թողնում տարրական դպրոցում

Ուսումնական գործունեությունն, ունենալով բարդ կառուցվածք, անցնում է կայացման երկարատև ուղի: Նրա զարգացումը շարունակվում է ամբողջ դպրոցական կյանքի ընթացքում, բայց հիմքերը դրվում են ուսուցման սկզբնական տարիներին: Դպրոցական ուսուցանումը տարբերվում է ոչ միայն երեխայի գործունեության հատուկ սոցիալական նշանակալիությամբ, այլև մեծերի օրինակների և գնահատականների հետ հարաբերությունների միջնորդավորվածությամբ: Այս առանձնահատկությունները, ինչպես նաև ուսումնական գործունեության յուրահատկությունը ազդում են երեխայի հոգեկան ֆունկցիաների, անձնային կազմավորումների, կամային վարքի զարգացմանը:

Ուսումնական գործընթացի նպատակադրումը ձեւավորվում է ուսումնաճանաչողական դրդապատճառներով, որոնց թվին են պատկանում ուսումնական գործողությունների ընդհանրացված եղանակներ ձեռք բերելու դրդապատճառները:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականությունն միջառարկայական կապերով: «Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը»:

Ուսումնական գործընթացի կառուցվածքի կարեւորագույն բաղադրամասերը կազմում են ուսումնաճանաչողական դրդապատճառները, ուսումնական պահանջմունքները: Դրանք եւ կազմում են հիմքը, որի ձեւավորումը ուսուցման հիմնական խնդիրներից մեկն է: Ուսուցման հետագա հաջողությունն առաջին հերթին պայմանավորված է նրանով, թե որքանով են դեռեւս տարրական դասարաններում ձեւավորվել այդպիսի դրդապատճառներ: Եթե ուսուցչին հաջողվում է ձեւավորել նման դրդապատճառներ, ապա դրանք, ստանալով նոր

բովանդակություն, նպաստում են գործունեության այն ընդհանուր դրդապատճառների ձեւավորմանը, որոնք կապված են դպրոցական դիրքորոշման հետ:

Մասնագիտական-մեթոդական որակների զարգացման դասընթացների անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ անընդհատ ձևավորվում են նոր ուսումնամեթոդական համալիրներ, ստեղծվում են ուսումնական նոր ծրագրեր, դասագրքեր, ուսումնաօժանդակ տարատեսակ նյութեր և միջոցներ: Մատչելի են դարձել տեղեկատվական թվային տեխնոլոգիաները՝ բջջային հեռախոս, թվային ձայնագրիչ, թվային ֆոտոխցիկ, համակարգիչ:

Ուսումնաճանաչողական դրդապատճառները տարբերվում են ճանաչողական հետաքրքրություններից նրանով, որ դրանք ոչ թե պարզապես ուղղված են շրջապատող իրականության երեւույթների մասին տեղեկատվության ձեռքբերմանը, այլ ուսումնասիրվող ուսումնական առարկայի կոնկրետ բնագավառում անհրաժեշտ գործողության եղանակների յուրացմանը:

Առաջին հերթին այս տարիքի երեխաները շատ հետաքրքրասեր են: Նրանք գտում են ավելի շատ բան իմանալ բնական երևույթների, մարդկանց ու շրջապատող աշխարհի մասին: Այդ պատճառով էլ նրանք բազմաթիվ ու բազմապիսի հարցեր են տալիս ուսուցիչներին, ծնողներին ու ծանոթներին: Նրանց այս հատկությունը, եթե խելացի ուսուցչի կողմից ճիշտ ուղղություն ստանա, ապա կարող է դառնալ նրանց մտահորիզոնի և գիտելիքների ընդլայնման հոգեբանական հիմք: Կրտսեր դպրոցականների մյուս բնորոշ գիծը նրանց հուզական բարձր գրգռվածությունն է: Ուսուցչի հուզիչ խոսքը, վառ գույները, դիտած կինոնկարը, կարդացած հեքիաթը ամբողջությամբ գրավում, կլանում են երեխաներին: Սրան հակառակ երկար ու ձանձրալի խոսքային չոր շարադրանքը, խրատական քարոզները հոգնեցնում, շեղում է նրանց ուշադրությունը:

Կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեությունն ունի որոշակի կառուցվածք, որն ըստ Դ.Ի. Էլկոնինի՝ ունի հետեւյալ բաղադրամասերը՝

1. ուսումնաճանաչողական դրդապատճառներ,
2. ուսումնական խնդիրներ,
3. ուսումնական գործողություններ,
4. վերահսկողություն,
5. գնահատում:

Ըստ մեզ՝ այս կառուցվածքը լիարժեք չէ. կառուցվածքից դուրս են մնացել ուսման նկատմամբ պահպանջմունքները եւ նպատակադրումը, որն անպայման պետք է մտնի կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեության համակարգի մեջ:

Այսինքն, ըստ մեզ, կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեու-թյան կառուցվածքը հետեւյալն է՝

1. ուսումնական պահանջմունքներ,
2. ուսումնաճանաչողական դրդապատճառներ,
3. ուսման նպատակդրություն,

4. ուսումնական խնդիրներ,

5. վերահսկողություն,

6. գնահատում:[2]

Այս բաղադրամասերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, որոնք նույնպես դարձել են հոգեբանների եւ մանկավարժների հետազոտության առարկա:

Ուսումնական գործունեության կառուցվածքի կարեւորագույն բաղա-դրամասերը կազմում են ուսումնաճանաչողական դրդապատճառները, ուսումնական պահանջմունքները: Դրանք եւ կազմում են հիմքը, որի ձեւավորումը ուսուցման հիմնական խնդիրներից մեկն է: Ուսուցման հետագա հաջողությունն առաջին հերթին պայմանավորված է նրանով, թե որքանով են դեռեւս տարրական դասարաններում ձեւավորվել այդպիսի դրդապատճառներ: Եթե ուսուցչին հաջողվում է ձեւավորել նման դրդապատճառներ, ապա դրանք, ստանալով նոր բովանդակություն, նպաստում են գործունեության այն ընդհանուր դրդապատճառների ձեւավորմանը, որոնք կապված են դպրոցական դիրքորոշման հետ:

Ուսումնաճանաչողական դրդապատճառները տարբերվում են ճանաչողական հետաքրքրություններից նրանով, որ դրանք ոչ թե պարզապես ուղղված են շրջապատող իրականության երեւույթների մասին տեղեկատվության ձեռքբերմանը, այլ ուսումնասիրվող ուսումնական առարկայի կոնկրետ բնագավառում անհրաժեշտ գործողության եղանակների յուրացմանը:

Առաջին հերթին այս տարիքի երեխաները շատ հետաքրքրասեր են: Նրանք գտնում են ավելի շատ բան իմանալ բնական երևույթների, մարդկանց ու շրջապատող աշխարհի մասին: Այդ պատճառով էլ նրանք բազմաթիվ ու բազմապիսի հարցեր են տալիս ուսուցիչներին, ծնողներին ու ծանոթներին: Նրանց այս հատկությունը, եթե խելացի ուսուցչի կողմից ճիշտ ուղղություն ստանա, ապա կարող է դառնալ նրանց մտահորիզոնի և գիտելիքների ընդլայնման հոգեբանական հիմք: Կրտսեր դպրոցականների մյուս բնորոշ գիծը նրանց հուզական բարձր գրգռվածությունն է: Ուսուցչի հուզիչ խոսքը, վառ գույները, դիտած կինոնկարը, կարդացած հեքիաթը ամբողջությամբ գրավում, կլանում են երեխաներին: Սրան հակառակ երկար ու ձանձրալի խոսքային չոր շարադրանքը, խրատական քարոզները հոգնեցնում, շեղում է նրանց ուշադրությունը:

Կրտսեր տարիքի մյուս առանձնահատկությունները ընդօրինակումն է: Նրանք շատ են սիրում կրկնել ու վերարտադրել մեծերի շարժումները, վարքի ձևերը: Նրանց ընդօրինակաման առաջին օբյեկտը ուսուցիչն է, որը նրանց համար դառնում է ամենաբարձր հեղինակությունը: ցավոք, երեխաները ընդօրինակում են նաև բացասական երևույթները, ուստի չափահասները պետք է խուսափեն բացասական վարքի ձևերից:

Կրտսեր տարիքի մյուս բնորոշ գիծը կոլեկտիվիզմն է, համատեղ աշխատանքի մեջ ներգրավվելը: Նրանք ձգտում են ամեն ինչով աչքի ընկնել, արժանանալ հասակակիցների և

---

[2] 4.Սերգեյ Մանուկյան Ընդհանուր մանկավարժագիտություն- 2005թ.

5.Ամիրջանյան Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ

6.Бордовская Н.В., Реан А.А. Педагогика, 2009

ուսուցիչների գովասանքին: Ուսուցչի խրախուսանքից ավելի ակտիվ ու նախաձեռնող են դառնում: Սրան հակառակ, ընկերներից ետ մնալը, պարսավանքի արժանանալը, նրանց մեջ առաջացնում է բացասական հուզական վիճակներ, հոգեկան ակտիվության անկում: Համատեղ ուսումնական աշխատանքն ու խաղը երեխաների մեջ դաստիարակում է բարոյական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը, կամային վճռականությունը և պարտքի զգացումը:

Կրտսեր դպրոցականների ընկալումը սկզբնական շրջանում կրում է ընդհանրացված, ոչ տարբերակված բնույթ: Նրանք դժվարանում են միանգամից տարբերակել առարկաների ու պատկերների ներքին կառուցվածքային բաղադրիչները: Օրինակէ որևէ տեքստ ընթերցելիս նրանք հայացքով թռչում են մի տողից մյուսը, բաց թողնում տառեր ու վանկեր: Նրանք հաճախ են շփոթում 6 և 9 թվերը, ռուսերեն Э և З տառերը: Աստիճանաբար երեխաները տիրապետում են ընկալման տեխնիկային, սովորում են դիտել, լսել, տարբերել գլխավորը երկրորդականից: Փոխվում է նաև բառի դերը ընկալման պրոցեսում, այն դառնում է մտավոր հենարան ուրիշ բառիմաստներ ընկալելու համար: Զգալի չափով զարգանում է ժամանակի և տարածության ընկալումը: Նրանք տարբերում են տարածական հատկանիշները և կարողանում են չափումներ կատարել: Երեխաները ավելի շատ դժվարանում են ընկալել ժամանակային հատվածները: Հոգեբան Շաբալինի փորձերը հաստատել են, որ երեխաները կարճ ժամանակը ավելի օիշտ են ընկալում, քան տևական ժամանակը: Պրակտիկ նշանակություն ունի նաև տեմպի ընկալումը, ըստ հոգեբան Մեյմանի, երեխաներին ավելի մատչելի է միջին տեմպը: Ժամանակի ճիշտ ընկալումը կախված է երեխաների գործունեության կազմակերպումից: Ռեժիմի պահպանումը, ուսումնական առաջադրանքների սիստեմատիկ կատարումը, խաղի և աշխատանքի զուգակցումը երեխաների մոտ մշակու է ժամանակի ճիշտ ընկալումը:

Ուշադրություն զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում ընթանում է ոչ կամածին տեսակից դեպի կամածին ուշադրությունը: Սկզբում երեխաները դժվարությամբ են կենտրոնանում հաղորդվող նյութի և ցուցադրվող առարկաների վրա: Առաջին և երկրորդ դասարաններում ուշադրության կազմակերպմանու կառավարման ուղղությամբ ուսուցչից պահանջվում են մեծ ջանքեր: Նախ պահանջվում է դասը վարել զննական ու ցուցադրական նյութերի օգտագործման մեթոդով. Խոսքը դարձնել հուզիչ ու գրավիչ, հարկ եղած դեպքում կիրառել ուսուցման խաղային մեթոդներ: Կամածին ուշադրության զարգացման համար, ըստ հոգեբան Դոբրինինի , կարևոր է այն, թե որքանով են երեխաները գիտակցում սովորած նյութի կիրառական նշանակությունը: Վերջինիս գիտակցումը կենտրոնացնում ու կայունացնում է նրանց ուշադրությունը: 3-րդից 4-րդ դասարաններում արդեն երեխաները ուշադիր լինելու փորձ ու հմտություն են ձեռք բերում և կարողանում են ուշադրությունը բաշխել ու տեղափոխել: Երեխաների ուշադրությունը կենտրոնացնելու գործում մեծ դեր է խաղում նաև ուսուցչի խոսքի ու աշխատանքի տեմպը: Չափից դուրս արագ և չափազանց դանդաղ տեմպը շեղում է երեխաների ուշադրությունը:

Դպրոցական ուսուցման առաջին տարիներին երեխաների հիշողությունը կրում է մեխանիկական վերարտադրողական բնույթ: Նրանք ձգտում են նույնությամբ սովորել ու կրկնել դասագրքից նյութը կամ ուսուցչի պատմածը: Այս հանգամանքը դժվարացնում է նյութի հասակացումը, ուստի պահանջվում է զարգացնել նրանց իմաստային հիշողությունը: Մեխանիկական տեսակից իմաստային ձևին անցնելու համար պահանջվում է կիրառել մեթոդական-հոգեբանական մի քանի հնարներ: Դրանցից են 1.ծավալուն նյութը առանձին մասերի բաժանելը և մաս-մաս սովորելը՝ վերջում այն ամբողջացնելով: 2. Առանձին մասերին վերնագիր նշանակելը: 3.Նյութի առանձին բաղադրիչների միջև նմանությունների և տարբերությունների գտնելը: 4. Նման հատկանիշները խմբավորելը և այլն:

Կարևոր հնարներից է նաև պլանային հարցեր կազմելը, դասակարգելը և առանձին մասերի միջև իմաստային կապեր ստեղծելը: Հիշողության և գիտելիքների ամրապնդման ավանդական մեթոդ է կրկնությունը: Սակայն կրկնությունը պետք է կազմակերպել այնպես, որ յուրաքանչյուր անգամ նյութը լրացվի ու հարստացվի նոր փաստերով ու անհայտ կողմերով: Կրկնության նպատակն է ամրապնդել յուրացման ենթակա ծրագրային նյութը և ուղղել տևական հիշողության մեջ: Երեխաներն ավելի լավ են հիշում այն նյութը, որը զգացական տպավորություն է թողնում, կամ որի հետ գործողություն են կատարում: Նրանք վատ մտապահում և վերադառնում խոսքային, վերացական շարադրանքը:

Կրտսեր դպրոցականների հիշողության խթանման միջոցներից է մտախողության պրոցեսների կիրառումը: Հոգեբան Սմիռնովը ուսումնասիրել է 2-րդ և 4-րդ դասարանցիների մտապահման հնարավորությունները: 2-րդ դասարանցիները ինքնուրույն կերպով չեն կարողանում գտնել առարկաների նման և տարբեր գծերը և համեմատություն չեն կատարում, իսկ 4-րդ դասարանցիները համեմատելու շնորհիվ հեշտությամբ հիշում են անցած նյութը: Գոյություն ունի նաև ռեմինիսցենցիայի երևույթը, երբ նյութը սովորելուց անմիջապես հետո ավելի վատ է մտապահվում ու վերարտադրվում, քան որոշ ժամանակ անց:

Կրտսեր դպրոցականների մտածողությունը կրում է կոնկրետ պատկերային բնույթ, թեև պահպանվում են ակնառու գործնական տեսակի տարրերը: Մտածողության կոնկրետությունը դրսևորվում է նրանում, որ նրանք մոտավոր խնդիրները լուծում են միայն այն դեպքում, երբ առկա են նյութական առարկաները կամ նրանց պատկերները: Հաշվի առնելով մտածողության այս հատկությունը ուսուցչի մաթեմատիկակն առաջադրանքները պետք է կոնկրետացնեն զննական պատկերային ձևով կամ առարկայական օրինակներով: Կրտսեր տարիքի երեխաներին բնորոշ է մտահանգման ինդուկտիվ ձևը , այսինքն կոնկրետ առարկայական մտածողությունից գնալ դեպի ընդհանուր, վերացականը: Մտածողությունը ավելի շատ վերացական հասկացություններ: Առաջին դասարանցու համար թիվը մտավոր հենարան դժվար է դառնում առանց կոնկրետ առարկայի: Թվերի հետ նա գործողություն է կատարում առարկաների միջոցով, որից հետո աստիճանաբար առարկաներին փոխարինում են մատները, փայտիկները կամ հաշվելի հատիկները: Ըստ ռուս հոգեբան Դավիդովի կրտսեր դպրոցականները ընդունակ են մտավոր գործողություններ կատարել վերացական

հասկացություններով: Օրինակ. մեկ լիտր հեղուկը նշանակում են որոշակի երկարությամբ գծով, 2 լիտրը երկու անգամ երկար գծով, այնուհետև գծերը նշանակում են տառերով և ստանում հեղուկ-գիծ-տառ հաջորդական շղթան: Վերջում երեխաները գործողություն են կատարում միայն տառերի հետ:

Կրտսեր դպրոցականների երևակայությունը, շնորհիվ նախադպրոցական, խաղային գործունեության, համեմատաբար լավ է զարգացած, քան մյուս հոգեկան պրոցեսները: Դպրոցական ուսուցումը նոր պահանջներ է դնում նրանց երևակայության առջև: Երեխաները ընթերցանության և պատմության դասերին ոչ միայն պիտի սովորեն նյութը, այլև պատկերացնեն ու մտովի վերականգնեն անցյալի իրադարձություններն ուղեմքերը, որոնց չեն տեսել:[3]

[3] 1.Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ»
2.Բաբանսկի հատոր առաջին

Եզրակացություն

Ե՛վ ուսուցիչները, և՛ աշակերտները պետք է հարգեն միմիյանց: Ավելի կողմ եմ ընկերական հարաբերություններին աշակերտների և ուսուցիչների միջև, բայց եթե աշակերտները և ուսուցիչները կողմ չեն այդպիսի հարաբերություններին՝ կարող են հարաբերությունները լինել ավելի գործնական: Երկու դեպքերում է լինի հեռավորություն ուսուցչի և աշակերտի միջև: Ո՛չ ուսուցիչները, ո՛չ աշակերտները իրավունք չունեն խառնվել միմիյանց անձնական գործերին: Ուսուցիչը չպետք է վատ վերաբերվի աշակերտին միայն այն պատճառով, որ նա փոխել է իր խումբը, չպետք է պարտադրի, ստիպի կատարել որևէ աշխատանք, որը ծրագրից դուրս է, միայն իր օգտի համար: Նաև ուսուցիչները չպետք է ստիպեն գնալ որևէ ճամփորդության, որպեսզի իր համար նյութեր գրեն:

Աշակերտը պետք է ժամանակին ներկայացնի տրված աշխատանքները, հարգալից վերաբերվի ուսուցիչների հետ, պատրաստ ներկայանա դասին, մասնակցի ծրագրով տրված քննարկումներին, հետևել պայմանագրով նշված պայմաններին:

Աշակերտները պարտավոր են ժամանակին ներկա գտնվել դասերին, գործնական աշխատանքներին և սեմինարներին: Նրանք պետք է պահպանեն կարգապահության ոգին համալսարանում և համագործակցեն իրենց իշխանությունների հետ որ բոլոր գործողություններն իրականացվում են բնականոն և կանոնավոր դպրոցի տարածքում:

Պաշտպանության իրավունք ռիսկային իրավիճակներում Պետք է իմանալ և բացատրել ինձ, թե ինչ է կատարվում և օգնել ինձ դուրս գալ այս իրավիճակից: աջ Օրենքի առջև որպես անձի հավասար ճանաչում: Պետք է հարգել ուրիշներին և վերաբերվել նրանց որպես հավասար քաղաքացիների:

Յուրաքանչյուր աշակերտ ոչ միայն կարող է ստանալ, այլև իրավունք ունի ապահովելու, որ այն լինի ամբողջական, որակյալ և, որ ամենակարևորը, անվտանգ է երեխայի առողջության համար: Դպրոցում առողջ մթնոլորտի պահպանումը շատ կարևոր է, և որպեսզի դա լինի, անհրաժեշտ է պահպանել որոշակի պայմաններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ»
2. Բաբանսկի հատոր առաջին
3. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ, «Համագործակցային ուսուցում ձեռնարկ», 2006թ
4. Սերգեյ Մանուկյան Ընդհանուր մանկավարժագիտություն- 2005թ.
5. Ամիրջանյան Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ
6. Бордовская Н.В., Реан А.А. Педагогика, 2009